ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի
2007թ. մարտի 9-ին ժամը 10.30-ին կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը

Մասնակցում էին՝
Կառավարման խորհրդի անդամներ.

Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի գլխավոր տնտեսական խորհրդական
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Հրանտ Բեգլարյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ /նախարար Անդրանիկ Մանուկյանի փոխարեն/
Նազելի Վարդանյանը	«Հայաստանի անտառներ» բնապահպանական ՀԿ
Կարեն Նազարյանը	«Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղան» հիմնադրամ
Տոնական Ղազարյանը	Շենիկ ՁՕԸ
Վանիկ Սողոմոնյանը	Ֆերմերների ազգային միավորում ՀԿ
Վարդան Համբարձումյանը	«Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն

Նիստին հրավիրված էր.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Ջոն Հյուկոն	ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի Փոխնախագահ

Էնթոնի Գոդֆրին	Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար
Ալեքս Ռասինը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն,
Մայրոն Հիրնիակը	Հայաստանում «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի փոխտնօրեն
Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Ռուզաննա Ղազարյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Տիգրանուհի Բաղդասարյանը	ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատարի թարգմանիչ
Սիմոն Ղոնախչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ

Նիստի օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. Հայաստանում պաշտոնական այցով գտնվող ԱՄՆ ՀՄԿ փոխնախագահ պարոն Ջոն Հյուկոյի ներկայացումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի Կառավարման խորհրդին:

2. «Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի բնապահպանական / հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթին ներկայացված առաջարկների համակցված տեխնիկա-ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

3. «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

4. «68 պոմպակայանների վերականգնման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» իրականացնող խորհրդատվական կազմակերպության ընտրության նպատակով մրցույթի մասնակիցների կարճ ցուցակի կազմման, գնահատող հանձնաժողովի կազմի և առաջարկների ներկայացման հրավերի քննարկում և հաստատում:

5. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ֆինանսական հաշվետվողականության պլանի քննարկում և հաստատում:
6. Այլ հարցեր.

ա/ տեղեկատվություն՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գնումների ղեկավար Ալեքսանդր Բախտամյանի՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ իր դիմումի համաձայն աշխատանքից ազատվելու և համապատասխան թափուր պաշտոնը սահմանված կարգով համալրելու ուղղությամբ աշխատանքների մասին;

բ/ տեղեկատվություն՝ 3-րդ Հատկացման նախապայմանների հաշվետվությունում ներառված փաստաթղթերի քննարկման և հաստատման նպատակով Կառավարման խորհրդի նիստ հրավիրելու անհրաժեշտության մասին:

Նիստի ընթացքում օրակարգի.

1-ին հարցի առնչությամբ՝ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրեն Ա. Հովսեփյանը ներկայացրեց Հայաստանում պաշտոնական այցով գտնվող ԱՄՆ ՀՄԿ փոխնախագահ պարոն Ջոն Հյուկոյին, որից հետո ներկաները լսեցին պարոն Ջոն Հյուկոյի ողջույնի խոսքը և ելույթը, որում նա ներկայացրեց իր այցելության նպատակը, ինչպես նաև՝ իր երկօրյա այցելության ժամանակ կատարած ուսումնասիրության արդյունքում ձեռք բերած «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի աշխատակազմի կատարած աշխատանքի դրական գնահատականը: Ջոն Հյուկոն նշեց, որ իր այցի նպատակը, հիմնականում, «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի իրականացման ընթացքը սեփական աչքերով տեսնելն է և, անհրաժեշտության դեպքում, տեղում աջակցություն ցուցաբերելը, ինչպես նաև ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի ցանկությունը՝ օժանդակել «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի ամբողջությամբ և հաջողությամբ իրականացմանը, ինչը կապվում է Հայաստանի կողմից՝ ԱՄՆ և ՀՀ կառավարությունների միջև կնքված «Հազարամյակի մարտահրավեր» Համաձայնագրի բոլոր պայմանների լիովին կատարման հետ: Այն ներառում է նաև առաջիկայում Հայաստանում տեղի ունենալիք ընտրությունների ազատ, արդար և թափանցիկ իրականացումը: Հաշվի առնելով, որ Հայաստանը, ինչպես ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրով ընտրված մյուս 25 երկրները, ընտրվել է 16 չափորոշիչների հիման վրա, պարոն Հյուկոն հայտնեց Կորպորացիայի մտահոգությունը՝ Հայաստանում որոշ ցուցանիշների անկման միտումների առնչությամբ և նկատեց, որ առաջիկա ընտրությունները լավ հնարավորություն է այդ մտահոգությունը չեզոքացնելու համար: Հյուկոն տեղեկացրեց, որ ԱՄՆ կառավարությունը 7.5մլն դոլար է հատկացրել Հայաստանում ընտրությունների ազատ, արդար և թափանցիկ իրականացմանը նպաստելու համար, և, որ ԱՄՆ կառավարությունը նախատեսում է առաջիկա 2 ամիսներին հետևել ընտրությունների՝ ինչպես կազմակերպման, այնպես էլ անցկացման /ընտրացուցակներ, ձայների հաշվում և այլն/, ողջ ընթացքին: Հաշվի առնելով, որ Կորպորացիայի կողմից առաջադրված պայմանների չբավարարման պատճառով 2 պետություններում՝ Զամբիայում և Գանայում արդեն իսկ դադարեցվել են «Հազարամյակի մարտահրավեր» ծրագրերը, նման իրավիճակում չգտնվելու համար, Հայաստանում հատկապես կարևորվում է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների անցկացումը, ինչին նպաստելու համար պարոն Հյուկոն գործուղվել է Հայաստան անձամբ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն պարոն Դանիլովիչի կողմից:

Պարոն Հյուկոն շնորհակալություն հայտնեց Կառավարման խորհրդի նիստին մասնակցելու և Խորհրդի անդամների հետ անձամբ հանդիպելու հնարավորություն ընձեռելու համար:

Իր շնորհակալական խոսքը՝ ուղղված «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդին, ինչպես նաև՝ պարոն Հյուկոյին և ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» Կորպորացիայի գլխավոր գործադիր տնօրեն պարոն Դանիլովիչին, հայտնեց նաև Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար պարոն Էնթոնի Գոդֆրին:

Ի պատասխան վերը նշված ելույթների, ՀՄՀ-Հայաստան Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Անդրանիկ Մարգարյանը շնորհակալություն հայտնեց Ջոն Հյուկոյի այցելության և Կառավարման խորհրդի հետ ծրագրի իրականացման վերաբերյալ դրական

կարծիքը, ինչպես նաև քաղաքական ցուցանիշների մասին առկա մտահոգությունները կիսելու համար: ՀՀ Վարչապետը նշեց, որ ՀՀ կառավարությունն ամեն ջանք գործադրում է առաջիկա ընտրություններին լավագույնս նախապատրաստվելու և այն պատշաճ կերպով անցկացնելու համար: Պարոն Մարգարյանը նաև նշեց, որ ինքը՝ միաժամանակ որպես ներկա քաղաքական դաշտում գործող կուսակցության առաջնորդ, վստահ է Հայաստանում առաջիկա ազատ և արդար ընտությունների անցկացման հարցում:

ՈՐՈՇՎԵՑ՝ ընդունել ի գիտություն պարոն Հյուկոյի կողմից արված նկատառումները:

2-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «Արարատյան հարթավայրի գերխոնավ հողերի բնապահպանական / հիդրոլոգիական ելակետային ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման մրցույթին ներկայացված առաջարկների համակցված տեխնիկա-ֆինանսական գնահատման արդյունքները:

3-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «Ոռոգման նոր ջրամբարների կառուցման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքները:

4-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել «68 պոմպակայանների վերականգնման նպատակով տեխնիկական և տնտեսական հիմնավորվածության ուսումնասիրություն» իրականացնող խորհրդատվական կազմակերպության ընտրության նպատակով մրցույթի մասնակիցների կարճ ցուցակը, գնահատող հանձնաժողովի կազմը և առաջարկների ներկայացման հրավերը, մրցույթի անվանումը ձևակերպելով հետևյալ կերպ՝ «68 պոմպակայանների վերազինման ու արդյունավետության բարձրացման տեխնիկա-տնտեսական հիմնավորում»:

5-րդ հարցի վերաբերյալ որոշվեց՝ հաստատել ՀՄՀ-Հայաստան ծրագրի ֆինանսական հաշվետվողականության պլանը:

6-րդ հարցի վերաբերյալ որոշվեց ընդունել ի գիտություն «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանի տեղեկատվությունը.
ա/ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գնումների ղեկավար Ա. Բախտամյանի՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ իր դիմումի համաձայն աշխատանքից ազատվելու և համապատասխան թափուր պաշտոնը սահմանված կարգով համալրելու ուղղությամբ աշխատանքների մասին,
բ/ 3-րդ Հատկացման համար անհրաժեշտ նախապայմաններում ներառված փաստաթղթերի նախագծերի պատրաստ լինելու մասին և հանձնարարել Ա. Հովսեփյանին՝ դրանք, հաջորդ շաբաթվա ընթացքում Կառավարման խորհրդի նիստում քննարկելու և հաստատելու նպատակով, տրամադրել Կառավարման խորհրդի անդամներին:

Օրակարգի հարցերի սպառումից հետո Կառավարման Խորհրդի նախագահ, ՀՀ վարչապետ պարոն Ա. Մարգարյանը հնարավորություն տվեց նիստի մասնակիցներին արտահայտվելու նաև ծրագրին առնչվող, սակայն այդ օրվա նիստի օրակարգում չներառված այլ հարցերի և/կամ առաջարկների շուրջ:

Արդյունքում,
ա/ «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի Շահառուների Խորհրդի և Կառավարման Խորհրդի անդամ պարոն Վանիկ Սողոմոնյանը հայտնեց իր մտահոգությունը՝ Գեղարքունիքի մարզի մի քանի գյուղերի կապակցությամբ: Նա նշեց, որ Ծրագրի շրջանակներում մարզի Գանձակ գյուղի Գռիծոր կոչվող տարածքում ջրամբար կառուցելով ինքնահոս կերպով կբարելավվի նաև շրջակա Սարուխան, Հացառատ և Ծաղկաշեն գյուղերի ջրամատակարարման խնդիրը: Իսկ Նորատուս գյուղի ոռոգման ցանցը վերականգնելու դեպքում կկասեցվի տարածաշրջանի

ամենամեծ գյուղերից մեկի բնակչության համատարած արտահոսքը, և առաջարկեց, հնարավորության դեպքում Ծրագրում ներառել նաև այդ գյուղերը:
բ/ «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի Շահառուների Խորհրդի և Կառավարման Խորհրդի անդամ պարոն Կարեն Նազարյանն էլ առաջարկեց հնարավորություն ստեղծել ծանոթանալու այլ երկրներում ԱՄՆ «Հազարամյակի Մարտահրավեր» ծրագրով իրականացվող համանման աշխատանքներին և օժանդակելու փորձի փոխանակմանը:

Ի պատասխան նշված առաջարկներին՝ Կառավարման Խորհրդի նախագահ, ՀՀ վարչապետ պարոն Ա. Մարգարյանը հանձնարարեց.

ա/ Գեղարքունիքի մարզի վերոնշյալ գյուղերի հարցը լրացուցիչ ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով, որ «ՀՄՀ-Հայաստան» Ծրագիրն արդեն հաստատված է և դրանում լրացումներ այլևս հնարավոր չէ կատարել, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ պարոն Ա. Անդրեասյանի հետ համատեղ ներկայացնել առաջարկություն՝ հանրապետության միջոցներով հարցը կարգավորելու հնարավորության վերաբերյալ;

բ/ «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ներկայացնել հաշվետվություն՝ ԱՄՆ «Հազարամյակի Մարտահրավեր» ծրագրով իրականացվող աշխատանքներով փորձի փոխանակման նպատակով «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի պատվիրակության ս.թ. մարտի 4-5-ը Վրաստան կատարած այցելության վերաբերյալ:

Նիստի վերջում՝ ՀՄԿ փոխնախագահ պարոն Ջոն Հյուկոն մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց նիստին դիտորդի կարգավիճակով մասնակցելու հնարավորություն ընձեռելու համար: Նա շնորհակալություն հայտնեց նաև հանրապետությունում գործող հասարակական կազմակերպություններին, որոնք իրենց ներկայացուցիչների միջոցով ակտիվորեն մասնակցում են ծրագրի իրականացմանը: Հայտնեց, որ փորձի փոխանակման նպատակով «ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի 3 /երեք/ աշխատակից հրավիրվել են Վաշինգտոն ս.թ. մարտի 17-27-ը կայանալիք ՀՄԿ Համալսարան ծրագրին մասնակցելու համար: ՀՄԿ այլ երկրների փորձին կարելի է ծանոթանալ նաև այդ երկրներում իրականացվող ծրագրերի ինտերնետային կայքերի միջոցով: Առիթն առաջանալու պատճառով Ջոն Հյուկոն բարձր գնահատական տվեց «ՀՄՀ-Հայաստան» ծրագրի ինտերնետային կայքին, նշելով որ մյուս երկրների ծրագրերին իր կողմից առաջարկելու է՝ ուսումնասիրել այն և ընդօրինակել: Ընդհանուր առմամբ հայտնեց իր գովասանքը՝ «ՀՄՀ-Հայաստան» Ծրագրի աշխատակազմի կատարած աշխատանքի վերաբերյալ, միաժամանակ, ՀՀ իշխանություններին խնդրեց օժանդակել գրասենյակին՝ Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների, ծառայությունների մատակարարման և այլ հարցերում «Հազարամյակի Մարտահրավեր» Համաձայնագրի համաձայն տրամադրվող հարկային, մաքսային և պարտադիր այլ վճարների գծով արտոնությունների արագ կիրառումն ապահովելու գործընթացում:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ,
ՀՄՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ՊՈԱԿ-Ի ԻՐԱՎԱԽՈՐՀՐԴԱՏՈՒ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ